Եռանկար փորձադաշտ՝ արցախեան կտաւի վրայ

(Արցախն իրաւական լոյսի տակ)

Մենք իրաւացիօրէն յաճախ ենք խօսում այն մասին, որ Կենտրոնը՝ արհեստականօրէն բարդացնելով ու ձգձգելով Արցախի խնդրի արդարացի լուծումը, ինքնավար մարզը փաստօրէն դարձրել է ռազմական պատժիչ միջամտութեան իւրօրինակ փորձադաշտ՝ հետագայում արդիւնքները, որպէս պատրաստի դեղատոմսեր, երկրի միւս անհանգիստ շրջաններում կիրարկելու հեռանկարով: Դրա ակնյայտ օրինակները մենք տեսնում ենք Մերձբալթիկայում, Վրաստանում եւ Միութեան այլ վայրերում:

Սակայն իրադարձութիւնների այդ խառնակ հարահոսում երբեմն ակամայ մոռանում, գուցէ թէ անուշադրութեան ենք մատնում, որ Կենտրոնի, ինչպէս արուեստագէտները կ'ասէին, բազմահմուտ վրձինը արցախեան կտաւի վրայ մտայղացել եւ կերտում է մի փորձնական տրիպտիխ՝ եռանկար, որի երրորդ բաղկացուցիչ պատկերն է կազմում, ի լրումն քաղաքական եւ ռազմական միջոցների, նաեւ իրաւական նորմերի փորձարկումը:

Այս վերջին հարցադրմամբ էլ մեր թղթակիցը Հայաստանի Հանրապետութեան դատախազութեան ազգամիջեան յարաբերութիւններում օրէնսդրային կատարման նկատմամբ հսկողութեան բաժնի պետ, իրաւական գիտութիւնների թեկնածու Գեւորգ Դանիէլեանին:

Գ.Դ.-Նախ հարկ եմ համարում նկատել, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում արտակարգ դրութեան իրաւական ռեժիմը կարգաւորող օրէնսդրական ակտերի ռետրոսպեկտիվ վերլուծութիւնը միանշանակ վկայում է այն մասին, որ դրանք ակնյայտօրէն հակասում են ինչպէս ԽՍՀ Միութեան սահմանադրութեանը, այնպէս էլ խնդրոյ առարկայ հարցին նուիրուած այն օրէնսդրական ակտերին, որոնց մշակման եւ ընդունման համար վերջիններս հիմք են ծառայել: Այս տեսանկիւնից Դուք միանգամայն իրաւացի էք եւ ես չեմ կարող չհամաձայնուել Ձեզ հետ, որ իրօք ԼՂԻՄը վեր է ածուել իրաւական նորմերի փորձարկման մի իւրատեսակ փորձադաշտի:

Ընդ որում այդ մտայղացումը կեանքի է կոչւում հետեւեալ սցենարով. նախ, ընդունւում են երեւոյթի տարբեր կողմերը կարգաւորող զանազան հրամանագրեր, որոշումներ եւ այլ ենթաօրէնսդրական ակտեր, այնուհետեւ յատուկ այդ նպատակով ստեղծուած յանձնաժողովների կողմից դրանք որոշակի «ստուգատես» անցնելուց յետոյ հիմք են ծառայում արդէն Միութեան մասշտաբով օրէնքներ ընդունելու համար: Երեւոյթն ինքնին, ինչ խօսք, հակաբարոյական չէ, յայտնի վերապահումներով այն լայնօրէն կիրառւում է նաեւ արտասահմանեան ժողովրդավարական պետութիւնների օրէնսդրական պրակտիկայում: Սակայն կայ մի հանգամանք, որը ոչ մի կերպ հնարաւոր չէ անտեսել. հարցի էութիւնը այն է, որ օրէնք ընդունելուց յետոյ Միութեան օրէնսդիր մարմինները շուտով մոռացութեան են մատնում նախկինում ընդունուած ենթաօրէնսդրական ակտերը եւ նախանձելի յամառութեամբ դրանք չեն ձգտում համապատասխանեցնել գործող օրէնսդրութեանը, իսկ հակասութիւնը նախկինում ընդունուած ենթաօրէնսդրական ակտերի եւ գործող օրէնքների միջեւ հսկայական է եւ բնաւ չի բխում քաղաքացիների իրաւունքների պաշտպանութեան խնդրից:

Թղթ.-Պարոն Դանիէլեան, տրւեալ պարագայում ո՞րն է հիմնական հակասութիւնը:

Գ.Դ.-Առաջին հերթին ես կ'առանձնացնէի իշխանութեան մարմինների լիազօրութիւնների հետ կապուած հարցը: Այսպէս, համաձայն «արտակարգ դրութեան իրաւական ռեժիմի մասին» 1990թ. Ապրիլի 3ի ԽՍՀՄ օրէնքի 16 յօդուածի պետական իշխանութեան եւ կառավարման համապատասխան մարմինների լիազօրութիւնները կարող են կասեցուել միայն ժամանակաւոր նախագահական կառավարում մտցնելուց յետոյ: Այլ կերպ ասած, եթէ երկրի նախագահը, իրօք գտնում էր, որ իշխանութեան եւ կառավարման մարմինները «չեն ապահովում իրենց գործառնութիւնների պատշաճ իրականացումը», ապա նա կարող էր մտցնել ժամանակաւոր նախագահական կառավարում, կասեցնել վերոյիշեալ մարմինների լիազօրութիւնները, իսկ նրանց գործառնութիւնների իրականացումը յանձնել իր կողմից ստեղծուող մարմնին կամ նշանակուող պաշտօնատար անձին: Ինչպէս գիտէք, դա տեղի չունեցաւ, իսկ դրա փոխարէն իշխանութեան մարմինների գործառնութիւնները կատարում են զանազան տիպի կազմկոմիտէներ, զինուորական իշխանութեան օղակներ եւ այլն: Միութենական օրէնսդիր մարմինների անգործութեան եւ իրենց իսկ կողմից ընդունած օրէնքներն անտեսելու պայմաններում կարելի էր եւ աւելի վատթարը սպասել: Սա միակ հակասութիւնը չէ, բայց կարծում եմ բաւարար է ընդհանուր միտումը ցոյց տալու համար:

Թղթ.-Պարոն Դանիէլեան, որքան գիտենք, ստեղծուել է մի այսպիսի հակասական իրավիճակ. այն դէպքում, երբ երկրի տարբեր շրջաններում յարաճուն կերպով ուժգնանում են կենտրոնախոյս միտումները եւ հետզհետէ օրակարգի հարց է դառնում խորհրդային իշխանութեան, էլ չեմ ասում կուսակցութեան մենիշխանութեան, լինել-չլինելը, արցախցիները, ամբողջ Միութիւնում փաստօրէն միակն են, որ պահանջում են վերականգնել խորհրդային իշխանութիւնը եւ նրա գործադիր - կարգադրիչ մարմինները մարզում: Կոնկրետ ի՞նչ է արտում իրաւական այդ նորմի աննախադէպ խախտման փաստը երկրի իշխանութեան բարձրագոյն մարմինների քննարկման առարկայ դարձնելու ուղղութեամբ:

Գ.Դ.-Համոզուած եմ, որ խորհրդային իշխանութեան մարմինների (այն տեսքով, ինչ որ նրանք գործում են առ այսօր) լինել-չլինելու հարցը օրակարգի առարկայ է դարձել նաեւ արցախցիների հասարակական կարծիքի շրջանակներում: Սակայն դուք չէք կարող ինձ հետ չհամաձայնել, որ մարզի բնակչութիւնն այլ ընտրութիւն չունի: Իսկ իշխանութեան մարմինները, թէկուզեւ առկայ համակարգի պայմաններում, կարող են ապահովել անցումային բնոյթի որոշ նուազագոյն խնդիրների լուծումը:

Հայաստանի Հանրապետութեան դատախազութեանը հարցում էր արուած Գերագոյն Խորհրդին առընթեր մշտապէս գործող «Արցախ» կոմիտէից, որի համաձայն մենք ներկայացրել ենք եզրակացութիւն, իմ կողմից յիշատակուած իրաւական ակտերի եւ դրանց կիրարկման անօրինականութեան վերաբերեալ: Ինչպէս գիտէք, Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի նիստում քննարկուելուց յետոյ կայացուեց համապատասխան որոշում եւ ներկայացուեց ԽՍՀՄ սահմանադրական հսկողութեան կոմիտէ:

Թղթ.-Մանաւանդ, որ առաջին հերթին Միութեան սահմանադրական հսկողութեան կոմիտէն է, որ կոչուած է ուշադրութիւն դարձնելու եւ խստօրէն դատապարտելու այն ապօրինի երեւոյթը, երբ կոնկրետ Արցախի վերաբերեալ տարատեսակ հրամանագրերն ու որոշումները ոչ միայն չեն բխում ԽՍՀՄ սահմանադրութիւնից եւ օրէնքներից, այլեւ, որքան էլ տարօրինակ թուայ, գերակայում են դրանց նկատմամբ: Դա ինքը հենց իրաւական խախտման աղաղակող փաստ է:

Գ.Դ.-Իրաւաբան չլինելով հանդերձ Դուք միանգամայն ճիշտ գնահատեցիք ենթաօրէնսդրական ակտերի եւ օրէնքների նման յարաբերակցութեան անթոյլատրելիութիւնը: Գիտէք, հակասութիւնն այն է, որ այդ վիճակի մէջ միութենական մարմիններն իրենք են իրենց գցել, վերջիններս պէտք է խուսափէին նման իրաւական անախրոնիզմից: Ձեզ յայտնի է, թէ հիմա պատեհ-անպատեհ որքան են քննադատւում այն միութենական հանրապետութիւնները ու միւս պետական կազմաւորումները, որոնք այս կամ այն կերպ կասեցնում են միութենական ակտերի կիրարկումը: Իսկ տուեալ դէպքում կասեցնողի, աւելի ճիշտ՝ խոչընդոտողի դերում հանդէս է եկել ԽՍՀ Միութիւնը՝ յանձին իշխանութեան իր մարմինների: Իհարկէ, առանձին դէպքերում հարցերն օպերատիւ կարգաւորելու եւ մի շարք այլ նկատառումներով անհրաժեշտ է ընդունել նաեւ ենթաօրէնսդրական ակտեր, բայց թողնել, որ դրանք գործողութեան մէջ մնան այն բանից յետոյ, երբ արդէն խնդրոյ առարկայ հարցերը ստացել են օրէնսդրական կարգաւորում, ապա դա ոչ մի կերպ չի կարող իրաւական հիմնաւորում ստանալ:

Դրա բնորոշ օրինակը, ինչպէս նաեւ անխուսափելի հետեւանքը այսօր ԼՂԻՄում գործող կազմկոմիտէն է, որի համար որեւէ իրաւական հիմք միութենական եւ ոչ մի օրէնսդրական ակտում դուք չէք հանդիպի:

Թղթ.-Ինչպէս ասում են, փորձը փորձանք չէ, բայց փորձում է նա, ով ոչ միայն համարձակութիւն ունի, այլեւ հաւատում է իր քայլի դրական արդիւնքին: Այնպէս որ յուսանք, վերոյիշեալ հարցադրումը Միութեան Սահմանադրական հսկողութեան կոմիտէում կ'արժանանայ համապատասխան վերաբերմունքի:

Գ.Դ.-Իմ եզրայանգումներում, ինչ խօսք, կայ ենթակայական մօտեցում: Բայց զրոյցի ընթացքում ես աշխատեցի հիմք ընդունել միայն գործող օրէնսդրութիւնը, եւ այն փաստարկումները, որոնք այս կամ այն չափով գործնական փորձարկում են անցել կեանքում: Միւս կողմից ամբողջ ասուածը վկայութիւնն է այն բանի, որ ստեղծուած իրավիճակում նոյնպէս կարելի է աշխատանք ծաւալել Արցախի հիմնահարցի լուծման առանձին տեսանկիւններով: